ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

2025թ. նոյեմբերի 26 N387-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԻ ՕԳՆԱԿԱՆ ՍԵՐՈԲ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԱՐՁԱԿՈՒՐԴԻ ՄԱՍԸ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 158-րդ հոդվածով, 159-րդ հոդվածի 1-ին մասով, 161-րդ հոդվածի 2-րդ մասով, 162-րդ հոդվածի դրույթներով, 163-րդ հոդվածով, «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 19-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1384-Ն որոշումը, Ս.Սարգսյանի 2025 թվականի նոյեմբերի 24-ի դիմումը՝ *որոշում եմ.*

1.Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի օգնական Սերոբ Սարգսյանին տրամադրել ամենամյա նվազագույն արձակուրդի մասը 2025 թվականի մայիսի 15-ից 2026 թվականի մայիսի 15-ն ընկած ժամանակահատվածի համար՝ 12 աշխատանքային օր տևողությամբ 2025 թվականի դեկտեմբերի 1-ից դեկտեմբերի 16-ը ներառյալ:

2.Ֆինանսական վարչության հաշվապահական հաշվառման բաժնին՝ «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն վճարել նաև լրացուցիչ միանվագ արձակուրդային վճար՝ իր միջին ամսական աշխատավարձի չափով:

Recoverable Signature

X

VERIFIED OCSP 11/26/2025 15:58:16 GMT+4

Signed by: MOVSISYAN SERGEY 3309890457

Ս.ՄՈՎՍԻՍՅԱՆ